

ԾՂԱՍՏՐԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐՈՒՄ

ՎՐԱՑ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
Ա. ՀԱՏՈՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերջերս Թրիխիում լույս տեսավ Վրաց. ՍՍՌ ԳԱ-ի իսկական անդամ կոռնելի Կեկելիձեի «Վրաց հին մատենագրության պատմության» Ա. հատորը՝ երրորդ վերամշակված հրատարակությամբ:

Պրոֆ. Կեկելիձեն իր աշխատության այս առաջին հատորը նվիրել է վրաց հոգևոր մատենագրությանը: Երկրորդ հատորում հեղինակը նախատեսել է տալ աշխարհիկ գրականությունը:

«Հին Վրաց մատենագրության պատմության» դասընթացի այս նոր հրատարակությունը մեծ առավելություններ ունի նախորդ հրատարակությունների համեմատությամբ: Հեղինակը՝ նկատի ունենալով վերջին տարիներս սովետական գրականության հարցերի շուրջը մեր երկրում լայնորեն ծավալված դիսկուսիաները, և հատկապես իդեոլոգիական հարցերի մասին ՀամԿ(Բ)Պ Կենտրոնական կոմիտեի պատմական որոշումները, մի շարք գլուխներ ենթարկել է արմատական խմբագրման ու վերամշակման:

Ծիշտ է, աշխատությունն օգտագործում են նաև դպրոցներում, բայց այն դպրոցական դասագիրք չէ: Այն սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված ընդարձակ մի հետադոտություն է, որը հնարավորության սահմաններում պարզում և ճշտում է դեռևս չլուսարանված որոշ խնդիրներ և նախապայմաններ ստեղծում՝ դպրոցական դասագրքերի համար:

Հեղինակը իր աշխատության մեջ հիմնականում կանգ առնելով հանդերձ գեղարվեստական գրականության վրա, այս կամ այն չափով խոսում է նաև հին մատենագրական այնպիսի հուշարձանների մասին, ինչպես քաղաքական, փիլիսոփայական, աստվածաբանական, իրավաբանական և այլ կարգի երկերի: Հեղինակին հաջողվել է ցույց տալ, որ վրաց ժողովուրդը դարերի ընթացքում ոչ միայն յուրացրել է առաջավոր կուլտուրայի նվաճումները, այլև՝ իր լուծման է մոծել համաշխարհային կուլտուրայի ու գրականության գանձարանը:

Ինքնին հասկանալի է, որ գրականության պատմության ուսումնասիրության նյութը պետք է կազմի ինքնուրույն գրականությունը, սակայն այդ պատմության մեջ չեն կարող բոլորովին անտեսվել կամ բացառվել Թարգմանական երկերը: Ուստի միանգամայն բնական է, երբ հեղինակը զգալի չափով կանգ է առել նաև Թարգմանական գրականության վրա:

Հեղինակն իր այս մեծածավալ ու արժեքավոր աշխատությանը կցել է ընդարձակ մի ներածություն (էջ 7—97), որտեղ մանրամասնորեն քննում է մի շարք հիմնական խնդիրներ՝ վրաց հին մատենագրության նշանակությունը և նրա ուսումնասիրության վիճակը, վրաց գրական լեզուն և վրաց մատենագրության սկզբնավորումը, վրաց հին մատենագրության պատմության պերիոդները և ուսումնա-լուսավորչական ու դրական կենտրոնները հին Վրաստանում և այլն:

Ներածության առաջին ենթաբաժնում հեղինակը ցույց է տալիս, որ վրաց հին մատենագրությունը դեռևս անհրաժեշտ չափով ուսումնասիրված չէ, և որ գիտական լուրջ ուսումնասիրման համար իսկական պայմաններ ստեղծվեցին միայն Հոկտեմբերյան Մոցիալիստական ռևոլուցիայի հաղթանակից հետո, և այժմ հնարավոր է ծրագրված հետազոտված աշխատանք կատարել այդ ուղղությամբ:

Ներածության երկրորդ ենթաբաժնում հեղինակը տալիս է վրաց գրական լեզվի մեկնություն հակիրճ նկարագրություն, նրա զարգացման հեռանկարները՝ ստալինյան լեզվարանական ուսմունքի լույսի տակ:

Երրորդ ենթաբաժնում հեղինակը խոսում է վրաց հին մատենագրության պատմության պերիոդների մասին, ընդունելով հիմնականում չորս պերիոդ: Առաջին պերիոդը համարում է վաղ Ֆեոդալիզմի ժամանակաշրջան, որն ընդգրկում է վրաց մատենագրության սկզբնավորման օրից մինչև 10-րդ դարի

60-ական թվականները: Այդ շրջանում վրաց մատենագրության առաջնորդը Արևմտյան Վրաստանն էր: Արևմտյան Վրաստանն ընդհանուր վրացական թագաթական-կուլտուրական շինարարության մեջ, որոշ պատճառներով, դեռևս ակտիվ մասնակցություն չունի: Այդ պերիոդում տիրապետողը կրոնամիստիկական գաղափարախոսությունն է. եկեղեցա-հոգևորական ոճի մատենագրությունը: Այստեղ հեղինակը շոշափում է կուլտուրական-գրական շրջապատի խնդիրը, տալով հայոց, ասուրական և հունական գրականության հետ վրաց գրականության ունեցած կապերն ու փոխհարաբերությունները:

Երկրորդ պերիոդը հեղինակը համարում է ճորտատիրական ֆեոդալիզմի ժամանակաշրջան, որն ընդգրկում է 10-րդ դարի 80-ական թվականներից մինչև 13-րդ դարի կեսերը: Այստեղ հեղինակը տալիս է վրաց-բյուզանդական կուլտուրական-գրական փոխհարաբերությունները, վրաց լուսման բյուզանդական կուլտուրայի և գրականության դանձարանում:

Երրորդ պերիոդը համարում է անկման շրջան (13-րդ դարի երկրորդ կեսից մինչև 16-րդ դարի սկիզբը), վրացական կուլտուրայի ու մատենագրության վայրէջքը բացատրելով մոնղոլների արշավանքով ու տիրապետությանը և գրա հետ միասին՝ տնտեսական դժվարություններով, կուլտուրական-գրական կենտրոնների ոչնչացումով՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ երկրից դուրս:

Վերջապես, չորրորդ պերիոդը հեղինակը համարում է ճորտատիրական ֆեոդալիզմի ժամանակաշրջան (16-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի գրեթե 30-ական թվականները): Պրոֆ. Կեկելիձեն տալիս է այդ ժամանակվա Վրաստանի թագաթական, սոցիալ-տնտեսական և կուլտուրական պիճակը: Նախորդ շրջանի համեմատությամբ վրաց կուլտուրան ու մատենագրությունը վերելք է ապրում, այդ պատճառով էլ դիտության մեջ այդ պերիոդը կոչվում է «վերածնունդի» շրջան: Այդ վերածնունդն արտահայտվում է մատենագրության «ազգային» ոգով, ինքնուրույն ստեղծագործությունների ծավալումով: Այստեղ հեղինակը կանգ է առնում նաև հայերի, հույների, սուսների և Արևմտյան Իվրոպայի հետ վրացիների ունեցած կուլտուրական-գրական կապերի վրա:

Ներածության չորրորդ հնթարաժնում հեղինակը համառոտակի նկարագրում է զրուրոցական գործի կազմակերպումը հին Վրաստանում, ծանոթացնելով տարրական, միջնակարգ (Պետրիժոնի, Թբիլիսիի, Թելավի սե-

մինարիաները) և բարձրագույն դպրոցները (Կելաթի և Բղաթոյի ակադեմիաները), Իոանե Բատոնիշվիլու դպրոցը քահանայապետների և դպրապետների հաստատությունները, գրականության կենտրոնները՝ վանքերը (Տառ-կլարձիթի, Կելաթի և այլն), եկեղեցիները, արքայազների և քահանայապետների պալատները Վրաստանից դուրս՝ Սարայի վանքը և Պաղեստինի այլ վանքերը, Հրաշք լեռը, Մինայի լեռը, Աթոնի իվերական վանքը, Սև լեռը, Ջվարի վանքը, Պետրիժոնը և այլն:

Պրոֆ. Կեկելիձեն իր աշխատության առաջին մասում խոսում է վրաց մատենագիրների ստեղծագործությունների մասին: Այդ մատենագիրների թիվը հասնում է 73-ի, սակայն նրանցից մի մասի ստեղծագործությունները չեն հասել մեզ: Նրանց մասին կան հիշատակություններ վրաց տարբեր մատենագիրների մոտ, ինչպես նաև հայոց աղբյուրներում:

Առաջին մատենագիրը Իակոբ Յուրտավելին է, որ համարվում է 5-րդ դարի հեղինակ. սրան է վերագրվում «Վկայարանութ» թիւն սրբոյն Շուշանկայ» երկը: 6-րդ դարի վերջերում և 7-րդ դարի սկզբներում ապրել է վրաց կիրիոն Կաթողիկոսը (նրա աշխարհիկ անունն է Սվիմեոն) որը հայտնի է մեծ մասամբ հայոց աղբյուրներից (օր.՝ Պատմություն Ուստանեսի, 10-րդ դ.)։ Երրորդ մատենագիրն է Մարտիրի Քարթլիին, որին համարում են 6-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ, վրաց լեզվով պահպանված է նրան վերագրվող ճգնավորական-միստիկական բովանդակությամբ «Վասն զղման ու նվաստության» ստեղծագործությունը: Առաջին վրաց պատմիչը, բառի լայն առումով, համարվում է Գրիգոր պատմիչը, որին է վերագրվում սուրբ Նատթերգի «Վարք» 14-րդ գլխում տրված «Մցխեթայի պատմավոր խաչի կանգնեցումը...» և այլն, գրված ոչ շուտ 8-րդ դարից 8-րդ դարի վերջերի մատենագիրն է Իոանե Սարանիսձեն, որի գրչին է պատկանում «Վկայարանութ»-ն սրբոյն Հարութի, ուր նկարագրված է 8-րդ դարի Կարթլու թագաթական, հասարակական, տնտեսական և կրոնական պիճակը, և ոչ միայն Քարթլու, այլև մյուս հարևան երկրների, ինչպես Խաղարեստանի, Օսեթի և առանձնապես Արխագիայի (Արևմտյան Վրաստան):

«Վրաց հին մատենագրության պատմություն» դասընթացի հեղինակը՝ գրքի առաջին մասում (էջ 101—180) առանձին-առանձին քննություն է առնում նաև վրաց մյուս մատենագիրների, պատմիչների, կուլտուրական

ու քաղաքական գործիչներին թարգմանիչների կյանքն ու գործունեությունը:

«Վրաց հին մատենագրություն պատմության» երկրորդ մասում (էջ 383—584) հեղինակը տալիս է հին մատենագրության ժանրային տեսությունը, որ բաժանում է 11 ենթարամիկներին:

Առաջին ենթարամիկում քննության է առնում Աստվածաշնչի և Ավետարանի թարգմանությունների հարցը:

Երկրորդ ենթարամիկում քննում է ապոկրիֆները (պարականոն գրքերը), պարականոն մատենագրության ծագումն ու բնույթը, տալիս է այդ գրականության համացուցակը:

Երրորդ ենթարամիկում քննում է մեկնարանական մատենագրության ծագման ու նրա ընդհանուր բնույթի մասին:

Չորրորդ ենթարամիկում հեղինակը քննում է դավանարանական մատենագրությունը, մասնավորապես, առաջին, երկրորդ և չորրորդ պերիոդի վրաս դավանարանական մատենագրությունը:

Հինգերորդ ենթարամիկում քննում է բանավեճային մատենագրությունը — բանավեճը հեթանոսության դեմ, հակամադդեական, հակահրեական, հակամահմեդական (թարգմանական և ինքնուրույն), քննում է հակաարիանական, հականեստորական գրականությունը, ծանոթացնում է մենակեցությունն ընդհանրապես, և հայոցը՝ մասնավորապես, ինչպես նաև խոսում է քաղաքականության ու հակաքաղկեդոնականության մասին:

Վեցերորդ ենթարամիկում հեղինակը քննում է վարքագրությունը՝ որպես եկեղեցական պատմության բնագավառներից մեկը, տալիս է վրաց եկեղեցական-պատմական մատենագրության ընդհանուր տեսությունը, ճշտում վրաց վարքարանային մատենագրության սկիզբը, ծանոթացնում թարգմանչական վարքագրությունը, մինչև 10-րդ դարը և դրանից հետո:

Յոթերորդ ենթարամիկում հեղինակը խոսում է ճգնավորության մասին, քննության է առնում ճգնավորական-միստիկական մատենագրության ծագումը, ներկայացնելով վրաց ճգնավորական-միստիկական մատենագրությունը մինչև 10-րդ դարը:

Ութերորդ ենթարամիկը նվիրված է բեմասացությանը և ծանոթացնում է հայտնի և անհայտ թարգմանիչ բեմասացների ստեղծագործություններին:

Իններորդ ենթարամիկը նվիրված է վրաց կանոնական մատենագրությանը:

Տասերորդ ենթարամիկում քննվում է վրաց պատարագային մատենագրությունը:

Տասնմեկերորդ ենթարամիկում հեղինակը քննում է վրաց հին հոգևոր պոեզիայի երկու բնագավառը 1-ին՝ պատարագային պոեզիա և 2-րդ՝ առաջնորդական-պատումային պոեզիա:

Պրոֆ. Կ. Կեկելիձեի գիրքը զբաղված է հակիրճ, սահուն ու պատկերավոր լեզվով, ձեվավորված է պատշաճ կերպով ու հրատարակված է լավ թղթի վրա:

Ա. ՄՈՒՐՎԱԼՅԱՆ

